| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔ -7 | | | |
|---|---|---|---|
| N/N | անվանումը/տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանակը |
| 1 | 2 | 3 | 4 |
| 7.1 | Ավազան 1 տեղանոց: Չափսերը (ԵxԼxԲ) 1000x600x850 մմ; AISI 304 չժանգոտվող պողպատ, շրջանակը պատրաստված է քառակուսի չժանգոտվող պողպատի խողովակից 40x40մմ: Ավազանները եռակցված, եռակցման կարերը մշակված (1 հատ)՝ չափսերը 800x400x400 մմ, ամբողջական սիֆոնով: **Նմուշը /նկարը 4/ կցվում է:** | հատ | 1 |
| 7.2 | Ջեռոց: Մեկ սեկցիայով թխման էլեկտրական վառարան՝ Չափսերը (ԵxԼxԲ): 840x900x1080 (±100) մմ. Հզորությունը՝ չի գերազանցում 5 ԿՎ-ը. Լարումը՝230 Վ. Ջեռոցում առավելագույն ջերմաստիճանը 270°C. առավելագույն ջերմաստիճանին հասնելու ժամանակահատվածը- մինչև 30 րոպե: Վառարանը կազմված է մետաղական դռնով պողպատից արկղից, 2 բլոկ տաքացուցիչներից և 4 թխելու համար նախատեսված սինիներից: Տեղադրված է վթարային թերմոստատ,որը պաշտպանում է 320 °C-ից ավել տաքանալու դեպքում: Կառավարման վահանակը ներկառուցված է: Վառարանը ունի հզորության վերահսկման առանձին ջեռուցիչներ վերևի և ներքևի դարակների համար: Վառարանի ներքին չափսերը՝ 538x535x290 մմ. Տարողությունը –2 թխման սինիներ 530x470x30 մմ չափսերով: Վառարանը տեղադրված է ներկված տակդիրի վրա: Կողային և հետևի մասերը ներկված են, դիմային հատվածը պատրաստված է չժանգոտվող պողպատից, վառարանի ոտնակները կարգավորվող են: Հավաքածուն ներառում է 3 թխման սինիներ՝ պատրաստված չժանգոտվող մետաղից, չափսերը 530x470x30 մմ: Քաշը՝ 90կգ (+/-5) կգ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ: | հատ | 1 |
| 7.3 | Կոթավոր կաթսա 2լ: Կոթավոր կաթսա (սոտեյնիկ), 2 լիտր տարողությամբ, սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը 2 լիտր, տրամագիծը 190 մմ: Մետաղի հաստությունը 1,2մմ: | հատ | 2 |
| 7.4 | Կաթսա կափարիչով 4 լիտր տարողությամբ, սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը 4լիտր, տրամագիծը Φ220 մմ: Մետաղի հաստությունը 1,2մմ երկու բռնակով: Կափարիչը նույնպես բռնակով: | հատ | 2 |
| 7.5 | Կաթսա կափարիչով 10լիտր տարողությամբ, սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը 10լիտր, տրամագիծը Φ 260 մմ: Մետաղի հաստությունը 1,2մմ երկու բռնակով: Կափարիչը նույնպես բռնակով: | հատ | 1 |
| 7.6 | Կաթսա կափարիչով 20լիտր տարողությամբ, սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը 20լ, տրամագիծը Φ340 մմ: Մետաղի հաստությունը 1,2մմ երկու բռնակով: Կափարիչը նույնպես բռնակով: | հատ | 2 |
| 7.7 | Խոհարարական դանակներ - հավաքածու 5հատ՝ 5 գույնի, 1 - մսի դանակ 2 - հացի դանակ 3 - բանջարեղենի դանակ 4 - մրգի դանակ 5 - կաթնամթերքի դանակ, սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: | հատ | 1 |
| 7.8 | Պոլիպրոպիլենային խոհանոցային տախտակներ, հավաքածուն 5 հատ՝ 5 գույներով չափը 400x300մմ: | հատ | 1 |
| 7.9 | Ճաշի թվային ջերմաչափ, սննդային չժանգոտվող պողպատի զոնդով՝ AISI -304: Զոնդի երկարությունը՝ 200-300 մմ: Աշխատանքային միջակայքը ջերմաստիճանի՝ 0 ° C-50 ° C: Կենցաղային թվային ջերմաչափը ունի փոքրիկ էկրան: **Նմուշը /նկարը 7/ կցվում է:** | հատ | 1 |
| 7.10 | Բաժակ՝ պոչով, հախճապակե, տարողությունը 250մլ, կոթի երկարությունը 60մմ, ԳՕՍՏ 25185-93-ի չափորոշիչներին համապատասխան: | հատ | 42 |
| 7.11 | Ապուրի ափսե 300-400մլ ոչ ավել, հախճապակե, գույնը՝ սպիտակ կամ կաթնագույն, միագույն, առանց նախշերի, ԳՕՍՏ 25185-93-ի չափորոշիչներին համապատասխան: | հատ | 42 |
| 7.12 | Ափսե հախճապակուց, 21տրամագծով, խորությունը 6մմ, եզրը 3մմ: Գույնը՝ սպիտակ, միագույն, առանց նախշերի, ԳՕՍՏ 25185-93-ի չափորոշիչներին համապատասխան: | հատ | 42 |
| 7.13 | Ճաշի գդալ, սննդային չժանգոտվող պողպատից, երկարությունը 200մմ, հաստությունը 2 մմ, աշխատող մասի խորությունը 0.5մմ, եզրերը հարթեցված, փայլեցված, ԳՕՍՏ 25185-93 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: | հատ | 42 |
| 7.14 | Պատառաքաղ սեղանի, ատամիկները 4 հատ, երկարությունը՝ 200մմ, սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 25185-93 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: | հատ | 42 |

| | | | |
|---|---|---|---|
| 7.15 | Խառնիչային ծորակ 400: Չափսերը (ԵxLxԲ) 400x15x1100 մմ, չժանգոտող պողպատից,ծորակը լատուն միջնամասից պատին ամրացվող: Լվացարանին ամրացվող մասի տրամագիծը 30մմ: Ճնշումային դուշ-ծորակը պտտվում է 360 աստիճան, ճկվող է, միանում է տաք և սառը ջրին, նախատեսված է մինչև 30-50 բար ճնշման օգտագործման համար: Խողովակը ջերմակայուն է 100 ° C: | հատ | 1 |
| 7.16 | Շերեփ 250մլ, սննդային չժանգոտվող պողպատից՝ AISI -304, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: | հատ | 2 |

***Ծանոթություն՝  նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:***

Digitally signed by KANANYAN ALISA 5711860682
Date: 2025.03.25 12:14:42 AMT